

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ *)

Մենք իմացանք, թէ ինչ մեծ գեր է խաղում պարարտացման ժամանակ կենդանական աղբը, այժմ տեսնենք թէ ինչ տեսակի պակասութիւններ ունի և թէ այդ պակասութիւնները ինչ միջոցով կարելի է լրացնել. դոմի աղբը իր մէջ պարունակում է բոյսի համար անհրաժեշտ բոլոր կերակրային նիւթերը. բացի դրանից նա շատայնում է հողի մէջ հումուսային մասերը, հողը բորակաձնով հարստացնող միկրոսկոպական մանր կենդանիներով՝ քակտերիաներով. նա անխիտարիներէի կերպով բարւոյում է հողի ֆիզիկական յատկութիւնները՝ տաքանալու և ձմռանը ընդունակութիւնը, փափկութիւնը և այլն. արուեստական պարարտացման նիւթերը, որոնք որ քիչ քանակութեամբ են գործածուում, անկարող են հողի մէջ եղած այսօրինակ պակասութիւնները լրացնել, այդ պատճառով էլ այդ տեսակէտից նայած միանգամայն անկարող են դոմի աղբին փոխարինել. բայց իբրև դոմի աղբին օժանդակիչ պարարտացման նիւթեր, նւթնաքանակներ գեր ունեն և անհրաժեշտութիւն են ներկայացնում իւրաքանչիւր մի հողագործութեամբ պարապող ժողովրդի համար: Գիւղատնտեսութեամբ մէջ կենդանաբուծութեամբ պարապել առանց հողագործութեան անհասկանալի է, իսկ ընդհակառակը՝ հողագործութեամբ պարապել առանց կենդանաբուծութեան—հասկանալի. այնպէս որ այն մտրդիկ, որոնք հողագործութեամբ են պարապում առանց դրա հետ առաջ տանելու կենդանաբուծութիւնը, այդպիսիներին արուեստական պարարտացման նիւթերը մեծ ծառայութիւն են մատուցանում: Բայցի դրանից՝

*) Տես «Մուրճ» № 7.

գիւղից շատ հեռու ընկած տեղերում, որտեղ կարիք կայ պարարտացման, և աղբի տեղափոխութիւնը ահագին ծախքերի հետ է կապուած, կարելի է արուեստական փոքրածաւալ նիւթերին դիմել և ցանկալի կերակուրը մտցնել հողի մէջ: Բայց որ ամենազլխաւորն է՝ կան դէպքեր, որոնց ժամանակ եթէ չենք ուզում հողի արդիւնաբերող ուժից զրկուել, կամայակամայ պարտաւոր ենք արուեստական պարարտացման նիւթերին դիմելու. ահա թէ ինչպէս. գիտենք, որ բոյսերը իւրաքանչիւր մի կերակրային նիւթից համահասար քանակով չեն վերցնում և որ մի բոյս մի տեսակ նիւթից է աւելի շատ կերակուր վերցնում, մի ուրիշը մի այլ տեսակ նիւթից, օրինակ, հացահատիկները մեծ քանակութեամբ վերցնում են բորակածին, առւոյտի տեսակները կալիում, փոշակաւոր բոյսերը ֆոսֆոր և այլն. և որովհետեւ այս նիւթերից իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ բերքի միջոցով վերցնում ենք հողից, ընականաբար հողի մէջ ամենից շուտ պակասութիւն է զգացւում վերոյիշեալ նիւթերի. աղբով պարարտացնելու դէպքում մենք մեր նըպատակին հասած չենք լինի. որովհետեւ մեր միւս թանկագին նիւթերը մի տեսակ կերակրային նիւթերի համար չպրտած կը լինենք հողի մէջ առանց մի որեւէ օգուտ ստանալու, եսկ այն ինչ՝ արուեստական պարարտացման նիւթերի շնորհիւ մենք հնարաւորութիւն ունենք հողի մէջ մտցնել միայն այն նիւթերը, որոնց կարիք ունի. այսինքն բորակածուով աղքատ հողի մէջ՝ բորակածին, ֆոսֆորով աղքատի մէջ ֆոսֆոր և այլն: Բայց տարբեր պայման է, եթէ հողի մէջ պակասում է սչ թէ մի տեսակ կերակրային նիւթ, այլ մի քանիսը. եթէ այդ տեսակ հանգամանքներում արուեստական պարարտացման նիւթերից հողին տանք միայն մի տեսակի կերակուր և մնացած պակաս կերակրային նիւթերի վրայ ուշադրութիւն չը դարձնենք, այն ժամանակ հողի արդիւնաբերութիւնը կը մնայ անփոփոխ, և ընդհակառակը՝ եթէ հողի մէջ մտցնենք կարիք եղած բոլոր կերակրային նիւթերը, և եթէ հողի ֆիզիկական պայմանները էլ աջող են, այն ժամանակ մենք կը ստանանք ամենափարթամ արդիւնաբերութիւնը: Սրանից բնականաբար հետևում է, որ հողի մէջ կերակրային նիւթերը պէտքէ մտցնել այն յարաբերութեամբ, ինչ յարաբերութեամբ որ բոյսերը կերակուր են վերցնում. հակառակ դէպքում, այսինքն երբ կերակրային նիւթերից մէկն ու մէկը պակասում է հողի մէջ, բոյսը չէ կարող օգտուել և միւս կերակրային նիւթերից, նոյնիսկ եթէ նրանք շատ առատ լինին: Վերցնենք մի հասարակ օրինակ. անթագրենք թէ մի կտոր հող ունիւք, որի մէջ մտադիր ենք ճակնդեղ

(տակ) անկնչելի. ճակնդեղը 3 մաս բորակածնի հետ վերցնում է 7 մաս ֆոսֆոր և 2 մաս կալիում. բայց ենթադրենք որ մենք հողի մէջ ունինք միայն այդ նիւթերից երկուսը, օրինակ՝ բորակածինը և ֆոսֆորը, իսկ կալիումը պակասում է բոլորովին (թէ և այս տեսակ հող չը կայ). այն ժամանակ բոյսը բոլորովին չի աճիլ. այժմ վերցնենք հակառակը, այսինքն ենթադրենք, որ հողի մէջ ունինք 3 գրվ. բորակածին, 7 գրվանքայ ֆոսֆոր և, ոչ թէ 2, այլ 4 գրվ. կալիում. չը նայած որ այստեղ կալիումը 2 գրվ. աւել է, արդիւնաբերութիւնը կը մնայ միևնոյնը, ինչ որ եթէ 2 գրվ. լինէր. մի այլ օրինակ. վերցնենք 6 գրվ. բորակածին, 17 գրվ. ֆոսֆոր և 4 գրվ. կալիում. այս դէպքում արդիւնաբերութիւնը կը կրկնագատուի. և այսպէս՝ եթէ հողի մէջ մի կամ մի երկու կերակրային նիւթեր է պակասում, գոմի աղբով պարարտացնելը միանգամայն աննպատակ է եւ անօգուտ աշխատանք. Աղբով պարարտացնելու ամենամեծ անյարմարութիւններից մէկն էլ այն է, որ հողի մէջ այս կամ այն հարուստ քանակով գտնուած նիւթից չենք օգտուում, այլ այն ենք վերցնում, ինչ որ ազրի միջոցով տալիս ենք հողին:

Սակայն արդիւնաբերութիւն բարձրացնելը չէ պայմանաւորուում միայն արուեստական պարարտացման նիւթերը հողի տակ տալու մէջ, այլ դա կախուած է տարուայ եղանակներից, անկողութեան նպատակով որ հանդամանքներից նուազ կամ աւելից բարձր անկողութեան պայմանները կարող են արդիւնաբերութիւնը զրօի հասցնել և անգամ աւելի վնասակար աղղեցութիւն թողնել ապագայ տարիների նկատմամբ. արդիւնաբերութիւնը բարձր է լինում նամանաւանդ այն ժամանակ, երբ բացի տարուայ նպատակը եղանակներից, հողը որոշ աստիճանի խոնաւութիւն, տարութիւն և փափկութիւն ունի. դրա համար էլ արուեստական պարարտացման նիւթերը լաւ բերք են խոստանում միջակ հողերը պարարտացնելիս. ծայրայեղ ծանր և ծայրայեղ թեթեւ հողերն այնքան լաւ բերք չեն տալիս կերակրային նիւթերից՝ չոր աւազահողերի մէջ աճող բոյսերը կարելի են զգում ընդհանրապէս բորակածնի, սրովհետեւ աւազահողերի մէջ ձմողական յատկութիւնը շատ թոյլ է. այնպէս որ բորակածինը ջրի հետ կամ դուբս է հօսում, կամ գոլորչիանում է՝ իսկ ծանր կաւահողերը, ընդհակառակը հարուստ են բորակածնով կալիումի պահանջ են զգում նոյնպէս աւազահողի մէջ աճող բոյսերը. ֆոսֆորի կարիք է զգացուում ծանր կաւահողերի մէջ և այլն: Փորձառու դիւզանտեսը աճող բոյսերի տեսքից ևս կարող է իմանալ, թէ ինչ տեսակ նիւթեր են պակասում հողի մէջ. եթէ հացահատիկների հատիկը և նրանց մէջ գտնուած հատիկ-

ները նուազ են, նշանակում է՝ հողի մէջ պակասում է ֆոսֆոր. պայծառ կանաչ մինչև դեղին և ծայրերը կարմրաուղև տերևները ապացոյց են բորակածնի պակասութեան, երկար անհաստատ տերևները նշան են կալիումի բացակայութեան. լայն տերևները նշան են բորակածնի, իսկ հաստ և կարճ տերևները կալցիումի հարստութեան. սրանք ևս նշաններ են, որոնց վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել և կոսկածի դէպքում հողի վրայ փորձեր անել: Բոյսերի օգտուելը հողի մէջ գտնուած կերակրային նիւթերից կախուած է պարարտացման ժամանակից, բոյսերի տեսակից, նրանց արմատներից և վերջիններիս վրայ գտնուած մազմղուկներից. ընդհանրապէս դիտուած է, որ առաջին տարին բոյսերը վերցնում են պարարտացման նիւթերի կէսը, երկրորդ տարին մնացածի կէսը և այլն. խօսքս իհարկէ միջակ և թույլ պարարտացման մասին է, ապա թէ ոչ՝ հողը կարելի է այնպէս ուժեղ պարարտացնել, որ առաջին տարին նոյնիսկ բոյսերն անկարող կը լինին գրանց մի տասներորդական մասը վերցընել: Արուեստական նիւթերով պարարտացնելու ժամանակ առանձնապէս ուշադրութիւն պէտք է դարձնել կալիումի և ֆոսֆորի վրայ. այն է որ՝ գրանց քանակը աւելի շատ լինի հողի մէջ, քան թէ բոյսերը իսկապէս կարող են օգտուել, որովհետև յաջող եղանակներում, երբ անձրևի միջոցով բորակածին (ամոնիակ) է թափուում հողի վրայ, բոյսերը հնարաւորութիւն կ'ունենան եղած պաշարից օգտուելու, և այդ թուցիկ գազը անօդուտ տեղը չի կորչիլ, իսկ անաջող եղանակներում այդ նիւթերի վերարկրմամբ կարիք չ'ունինք վախենալու, դրանք հողի միջից շին անյայտանում բորակածնի նման, և եթէ ներկայ տարին բոյսերը չ'օգտուեցին, ապա ուրեմն կը մնայ յաջորդ տարուայ հաճար. մի հանգամանք ևս, որ այդպէս վարուելուն նպաստում է, այդ նիւթերի էժանութիւնն է. ֆոսֆորը 2—3 անգամ և կալիումը 5—7 անգամ աւելի էժան են, քան բորակածինը. հէնց առաջի պարարտացման ժամանակ այդ նիւթերով կարելի է ուժեղ պարարտացնել, բայց զոչոչ պէտք է լինել, որ ֆոսֆորի քանակը չափից չ'անցնի, ապա թէ ոչ նա կարող է բոյսերն այրել: Յաջորդ տարիները, նայած բերքին՝ նրա համաձայն էլ կարելի է կամ թեթև պարարտացնել կամ բոլորովին չը պարարտացնել: Որոշ բոյսերի վերաբերմամբ, օր. կարտոֆելի, կալիումի քանակից եւս պէտք է զգուշանալ: Եթէ մի հողի մէջ պակասում է կալցիում, այն ժամանակ կարելի է պարարտացնել կրով, որը թէ ուղղակի և թէ անուղղակի ծառայութիւն է մատուցանում. նախ հողի ֆիզիկական յատկութիւնը լաւացնում է, ապա շատ նիւթեր լուծում և բոյսերին իրրև հոկեմբեր, 1903.

կերակուր մատչելի է դարձնում և վերջապէս ինքը ծառայում է իբրև կերակուր, սրա քանակը եւս պէտք է չափից չը հանել, որով բոյսերը այրում են: Ինչ որ ասացինք կալիումի և ֆոսֆորի նկատմամբ, բոլորովին հակառակը պէտք է վարուել բորակածնի քանակի հետ. որովհետև հողի շատ տեսակներն անընդունակ են իրանց մէջ բորակածինը ծծել ու ամուր պահել, և բացի դրանից բորակածինը բաւական թանգ է, դրա համար էլ պէտք է խուսափել ամեն մի կորուստից եւ հողի մէջ մըտցնել միայն այնքան, որքան անհրաժեշտ է բոյսերին. բորակածնի կորուստի առաջն անհելու ամենագլխաւոր միջոցներից մէկն, ինչպէս վերևում յիշեցինք, այն է, երբ հողի մէջ բոյսերի կերակրի պահանջից աւելի ֆոսֆոր և կալիում ենք մտցնում:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են պարարտացնում հողն արուեստական կերակրային նիւթերով:

Մի երկրի բուսականութիւնը որքան փարթամ է, բնական է որ այդտեղի հողերն աւելի շուտով կ'ուժասպառուեն, քան թէ այն դէպքում, երբ արդիւնաբերութիւնը նուազ է, հետևաբար և կարիք կ'ունենան աւելի յաճախ պարարտացման: Թէ բերքի միջոցով որքան նիւթեր ենք վերցրել, նամանաւանդ պարարտացման գլխաւոր նիւթերից, դա կարելի է իմանալ ստացած արդիւնքի քաշից. մի գաղափար տալու համար, թէ ստացած բերքի որ տոկոսն է կազմում պարարտացման համար արժէքաւոր նիւթեր, որով և հնարաւորութիւն կ'ունենանք հետևեալ տարուայ պարարտացման նիւթերի տեսակը և քանակը որոշելու, աւելորդ չեմ համարում մի քանի նշանաւոր բոյսերի կերակրային նիւթերի հետևեալ աղիւսակը տալ.

1000 ֆունտ՝ օդի մէջ միջակ չորացած բերքում գլխաւոր պարարտացման նիւթերը բաղկացած են հետևեալ մասերից.

Բորակածին ֆոսֆոր կալիում.

Հացահատիկների հատիկի մէջ	18,0 ֆ.	7,7 ֆ.	5,1 ֆ.
» յարդի »	5,2 »	2,6 »	10,4 »
Փոշակաւոր բոյսերի հատ. »	38,2 »	10,2 »	11,5 »
» փոշակների »	8,5 »	3,2 »	14,5 »
Կարտոֆիլի պալարների »	3,4 »	1,6 »	5,8 »
» խոտի »	4,9 »	1,6 »	4,3 »
Ճակնդեղի »	1,6 »	0,9 »	3,8 »
» խոտի »	3,0 »	0,7 »	4,0 »
Աւուոյաների տեսակների (ծաղկելուն մօտ) »	21,0 »	5,4 »	16,6 »
Աւուոյտի մէջ կանաչ ժամանակ	7,0 »	1,4 »	4,4 »

Իհարկէ՛ վերոյիշեալ թւերից չի կարելի բոլորովին ճիշտ եզրակացութիւն հանել, քանի որ նոյնիսկ բոյսերի մի տեսակի զանազան ընտանիքի մէջ անազին տարբերութիւն կայ կերպով բերքի կողմից, նայած թէ բոյսը այդ տեսակի որ ընտանիքին է պատկանում և այն, բայց յամենայն դէպս հնարաւոր է ժօտաւոր եզրակացութիւններ հանել և աւելի լաւ միջոց չ'ունենալու գէպքում այս եղանակը գործադրել: Արուեստական պարարտացման նիւթերի մէջ կան հեշտ և դժուար լուծուողներ, առաջին տեսակը պէտք է գործադրել գարնանը, իսկ երկրորդն՝ աշնանը: Եթէ հնարաւորութիւն չ'ունենք վերոյիշեալ եղանակով, այսինքն բոյսերը չորացնելով ու կշռելով իմանալ գործադրուած նիւթերի քանակը, այն ժամանակ ստիպուած ենք մի այլ միջոցի դիմելու պարարտացման համար, վերոյիշեալ աղիւսակից մենք կարող ենք միայն բերքի միջոցով վերջերած նիւթերի քանակն իմանալ, իսկ թէ հողը ինչ բաղադրութիւն ունի, ինչ տեսակ նիւթերով է բնականից հարուստ, դրա մասին այդ միջոցով մի որևէ եզրակացութիւն հանել անկարող ենք: Քաղաքակիրթ երկրներում իւրաքանչիւր մի գիւղական համայնք ունի իւր շրջանի փորձնական կայարանը, և բաւական է եթէ մէկը այդտեղ ուղարկի իր հողից և յիշէ իր սպագայ ցանքը, այն ժամանակ նա պատրաստի կը ստանայ պահանջուելիք պարարտացման նիւթերը. մեր մէջ այդ տեսակ կայարաններ հիմնելը երկար ժամանակի խնդիր է. դրա համար էլ մենք կ'առաջարկենք հետեւեալ հասարակ միջոցը, որն իր պարզ բնութեամբ նոյնիսկ եւրոպական շատ գիւղական համայնքների մէջ գործածական է. այն է՝ շինել 9 ծաղկաման, իւրաքանչիւրը 1 խորանարդ արչին ծաւալով, այսինքն մի արչին լայնութիւն ունենայ, մի արչին երկարութիւն և մի արչին խորութիւն. ապա այդ ծաղկամանները լցնել փորձի ենթարկուող հողով և պարարտացնել հետեւեալ կերպով.

I ծաղկամանն առանց պարարտացման, II-ը բորակածնով, III-ը ֆոսֆորով, IV-ը կալիումով, V-ը բորակածնով և ֆոսֆորով, VI-ը բորակածնով և կալիումով, VII-ը ֆոսֆորով և կալիումով, VIII-ը բորակածնով, ֆոսֆորով և կալիումով և IX-ն աղբով պարարտացնելուց յետոյ կը սերմենք հողը և կը սպասենք բոյսերի աճելուն. հէնց աճեցողութեան առաջին շրջաններից ուշիուշով դիտելով ծաղկամանների մէջ գտնուած բոյսերը՝ կարող ենք որոշ եզրակացութիւն հանել, բայց ամենալաւն վստահելի միջոցն այն է՝ թողնել բոյսերին մինչև հասունացալը, ապա համեմատութեան մէջ զնել, թէ որ ծաղկամանի բոյսն ամենից լաւ է աճած, և նրա համաձայն հողը պարար-

տայնելու իսկ պարարտացման նիւթի քանակը որոշելու համար պէտք է նախ իմանանք պարարտացուելիք հողի մեծութիւնը, որի համար հարկաւոր է հողի երկարութեան արչինների թիւը բազմապատկել լայնութեան արչինների թւով. ապա մենք զիտենք, որ մեր ծաղկամաների իւրաքանչիւրի մակերեսովը հաւասար է մէկ քառակուսի արչինի. մենք նախօրօք զիտենք նոյնպէս, թէ որքան պարարտացման նիւթ ենք տուել ծաղկանոցին և իւրաքանչիւր տեսակին որքան. ուրեմն մեզ մնում է հողի մակերեսովի քառակուսի արչինների թիւը բազմապատկել ծաղկամանի մէջ գործադրած պարարտացման նիւթերի քանակով, և կը ստանանք ամբողջ պահանջուելիք պարարտացման նիւթերի չափը: Այս եղանակը գերակշռում է բոլոր եղած միջոցներից, որոնք մատչելի կարող են լինել մի գիւղական հասարակութեան: Եթէ միջոց չ'ունենք միշտ այսօրինակ փորձեր անել, այն ժամանակ առնուազն հարկաւոր է առաջին 3 տարին այս եղանակով փորձեր կատարել ու ապա վարուել վերի տուած «արդիւնքի կշռի» եղանակով:

Պարարտացման նիւթերն իրանց ամենափայլուն արդիւնքը ցոյց կը տան միայն այդ դէպքում, եթէ մենք համահաւասար սփռենք հողի վրայ և ապա կանոնաւոր կերպով խտնենք վարելահողի բոլոր շերտերի հետ: Աշխատանքն աւելի թեթեւացնելու համար կարելի է նախօրօք բոլոր պարարտացման կերակրային նիւթերն ի մի խտնել և այդպէս հողի վրայ սփռել. միայն այս միջոցը չի կարելի ամեն դէպքում գործադրել, որովհետև երբեմն սլատահում է, որ բորակածինը միանալով ֆոսֆորին՝ անլուծելի է դառնում ջրի մէջ և դրանով կորցնում իր արժէքը. զգուշութեան համար կարելի է նախ քան հողի մէջ տալը մի փորձ անել: Եթէ միանում է, ստիպուած ենք առանձին-առանձին հողի տակ տալ: Պարարտացումը յաջող է գնում և այն ժամանակ, երբ նիւթերը մանրած կամ աւելի լաւ՝ փոշիացրած են լինում. դրա համար կան առանձին տեսակի աղալու մեքենաներ, որոնք մի ժամում աղում են 75—80 պուդ և արժեն ընդամենը 60 ռուբլի: Խիստ նպատակայարմար է, որ իւրաքանչիւր մի համայնք, որ պարապում է հողագործութեամբ և գործադրում է արուեստական նիւթեր, այդ տեսակի մի մեքենայ ունենայ. նիւթերի հողի վրայ սփռելը տեղի է ունենում թէ ձեռքով և թէ մեքենայով. ձեռքով սփռելը շատ յարմարութիւններ ունի. եթէ պարարտացման նիւթերը շատ քանակութեամբ պէտք է մտցնել հողի մէջ, և դժուարութեամբ են սփռում հողի վրայ, այդ դէպքում կարելի է խտնել չոր հումուսի հետ՝ գործը թեթեւա-

ցընելու և յաջող առջ տանելու համար: Եթէ մտադիր ենք հողը մակերևոյթօրէն պարարտացնել, այն ժամանակ կարիք չը կայ խոփին դիմելու, այլ բաւական է միայն ցարանել, իսկ եթէ ոչ, այն ժամանակ պէտք է խոփով հողի տակը տալ:

Այժմ համառօտ կերպով թւենք պարարտացման նշանաւոր նիւթերի անունները, նրանց պարունակութիւնը և արժէքը:

Բորակածնով պարարտացուող նիւթերի մէջ ամենանշանաւոր տեղը բռնում է չիլի բորակը, որ վաճառուում է չիլի-զալպետեր անունով. զուտ բորակածնի պարունակութիւնը նրա մէջ հասնում է 15,5—16,4%: Ապա գալիս են ամոնիակի աղերը, որոնք թանգութեան պատճառով սփռան էլ գործածական չեն. սրանց մէջ յայտնի է ամոնիակ-ծծմբաթթուն, որը վաճառուում է ամոնիում-սուլֆուրատ անունով. սրա մէջ բորակածնի քանակը կազմում է 19,5—20,4%: Ամոնիակ-ծծմբաթթուն աւելի շուտ է լուծւում հողի մէջ, քան չիլի բորակը, այդ պատճառով առաջինով պէտք է պարարտացնել գարնանն, իսկ վերջինով՝ աշնանը:

Ֆոսֆորային պարարտացման նիւթերից ամենալժան և գործածականն են, եթէ կարելի է այսպէս անուանել, Թոմաս-սի կղկղանքը (Thomasschlack), որի մէջ զուտ ֆոսֆորը կազմում է 10—25%: իսկ 38—60% կիր է, և ոսկրափոշին, որի մէջ ֆոսֆորը կազմում է 20—24%: պուղն արժէ 1 ր. 50 կ. սա ունի և իր հում, ոչ փոշիացրած տեսակը, որն աւելի էժան է, քայց դրա հակառակ շատ դանդաղ է քայքայուում:

Կալիումիով հարուստ պարարտացման և ամենատոլորական նիւթը մոխիրն է, որի պարունակութեան մէջ լինում է 8,43—37,80% կալիում. պուղն արժէ 70 կոպէկից—1 ր. 40 կ.: Մեր սովորական մոխիրը ևս կարելի է գործածել: Բորակածնի և ֆոսֆորի համար գլխաւոր պարարտացման նիւթերից մէկն է Պերուի գուանօն կայն:

Մեր նպատակից՝ իհարկէ՝ դուրս է այստեղ միառմի թւել պարարտացման այն բազմազան նիւթերի անունները, որոնք գործածական են գիւղատնտեսութեան մէջ: Վերոյիշեալ նիւթերը ձեռք բերելու և աւելի մանրամասն տեղեկութիւններ իմանալու համար պէտք է դիմել մի որեւէ գիւղատնտեսական ընկերակցական կազմակերպութեան կամ այդ տեսակ նիւթեր վաճառող գործարանների վարչութեան:

Մենք այստեղ խօսեցինք արուեստական պարարտացման միայն այն նիւթերի մասին, որոնք իբրև անմիջական աղբիւր են ծառայում բոյսերին կերակրելու համար:

Արուեստական պարարտացման մէջ գլխաւոր դեր են խաղում և՛ հողի արդիւնաբերութիւնը միջապէս բարձրացնող նիւթերը. սրանք թէ՛ բարելաւում են հողի ֆիզիկական յատկութիւնը, թէ՛ լուծում են՝ հողի մէջ, բայց բոյսերի համար անմատչելի գրութեան մէջ գտնուող կերակրային նիւթերը և թէ՛ իրանք ևս վերջապէս յաճախ իբրև կերակուր են ծառայում: Նայած թէ՛ բոյսերն ինչ տեսակ կերակրային նիւթերի պակասութիւն են զգում, և վերջինները հողի մէջ ինչ բաղադրութեամբ են գտնուում, զրա համաձայն էլ պէտք է միջական պարարտացման նիւթեր մտցնել հողի մէջ: Միջական պարարտացման նիւթերի գործածութիւնը հիմնուած է այն սկզբունքի վրայ, որ հողի մէջ գտնուում են իսկապէս բոյսերի համար անհրաժեշտ բոլոր կերակրային հանքային նիւթերը, միայն այն տարբերութեամբ, որ զրանք շատ դանդաղ են լուծուում և քնակաբար բաւարարութիւն չեն տալիս բոյսերի փարթած աճեցողութեան. բերենք մի պարզ օրինակ: Եթէ մի քանի տարիներ անընդհատ մշակուող մի հող այլևս նոյն արդիւնքը չէ տալիս, ինչ որ առաջ, այլ շատ քիչ, այն ժամանակ նրան մի առժամանակ անմշակ ենք թողնում և ապա կրկին՝ մշակելով՝ լաւ արդիւնք ենք ստանում: Եթէ ենթադրենք, որ բորակածիրն նոյնիսկ ամբողջապէս անձրևների միջոցով է հողի մէջ մտնում, հապա զորակից են ևրևան դալիս մնացած կերակրային նիւթերը, ինչպէս օրինակ՝ կալիում, կալցիում և ֆոսֆոր. քնական է որ զրանք հողի մէջ են եղել, միայն անմատչելի գրութեամբ: Բայց փոխանակ երկար տարիներ հողն անմշակ թողնելու և սպասելու, թէ երբ կը հարստանայ այդ նիւթերով, այսօրուայ քիմիան մեզ առաջադրում է նիւթեր, որոնցով մենք ինքներս կարող ենք հողի մէջ այդ ցանկալի քայքայումն արագայնել և անընդհատ օգտուել մեր տրամագրութեան տակ գտնուող հողերից. զրա համար ևս կան բաղմատեսակ նիւթեր, բայց մենք յիշենք ամենագործածականները:

Հողի մէջ եղած կալիումը լուծելու և բոյսերին մատչելի դարձնելու համար ամենագլխաւոր միջոցը դոժով պարարտացրենին է. այս նիւթն առանձնապէս յատուկ է ծանր հողերին և իր էականութեան պատճառով կարելի է միանդամից մեծ քանակութեամբ գործ ածել. սրուին արժէ 10—15 կոպ., մի գնակատիին համար հարկաւոր է մօտ 15—35 սլուգ. դաճի բաղադրութեան մէջ կայ և կալցիում, որը կարևոր դէպքում կարող է բոյսին իբրև կերակուր ծառայել:

Հողը բորակածնով հարստացնելու ամենանպատակայարմար միջոցը պէտք է համարել այրած կրով պարարտացնելը. սա

ոչ միայն արագապէս լուծում է հողում գտնուող թէ բուսական և թէ կենդանական մնացորդները և բոյսին մատչելի դրու-
թեան փոխակերպում, այլև մեծապէս օգտուում է օդի մէջ
գտնուող բորակածնից՝ ծծելով իր մէջ. բնական պարարտացման
նիւթերը աւելի ուժեղ են գործում, եթէ հողի մէջ կիր կայ. մի
նիհար, օրգանական նիւթերով աղքատ հողում կիրը մեծ ար-
դիւնք չէ ցոյց տալիս. ընդհակառակը՝ օրգանական հարուստ մը-
նացորդներ պարունակող հողերի վերաբերմամբ կիրն ամենա-
մեծ գործօնն է բարձր արդիւնաբերութեան: Խիստ նպատա-
կայարմար է նախքան կիրը հողի տակ տալը կազմել նրանից
պարարտացուելիք գաշտում թմբեր ու երեսը հողով ծածկել
և ապա 2—3 շաբաթ անցնելուց յետոյ փռել հողի վրայ և ապա
տակը տալ. որովհետև այդ ժամանակամիջոցում կիրը փոշիացած
կը լինի և հնարաւորութիւն կը տայ հողի մէջ համահաւասար
սփռելու: Հողի տակ տալը չը պէտք է կատարել անձրեային և
դանակներին, քանի որ կիրը թրջուելուց գնդակներ է կազմում
և անհնար դարձնում կանոնաւոր պարարտացնելը. կիրն աւելի
յատուկ է աշնանացան բոյսերին: Ծանր հողերի տեսակները
կարելի է ուշ-ուշ և մեծ քանակութեամբ պարարտացնել, օրի-
նակ՝ մի դեսեատինի համար 300—500 պուղ 8 տարուայ ժա-
մանակով. իսկ ընդհակառակը՝ թեթև հողերի տեսակները պէտք
է յաճախ և քիչ-քիչ քանակութեամբ պարարտացնել. մի դե-
սեատինի համար հարկաւոր է 60—70 պուղ 2 տարուայ ժամա-
նակով. կրի պուղն արժէ 4—7 կոպէկ:

Որտեղ որ կիրը պակասում կամ շատ թանգ է, նրա փո-
խարէն կարելի է գործածել կերակրի աղ. աղը բացի հողի մէջ
եղած կալիումը լուծելուց՝ կապակցում է հողի մասնիկներն
իրար հետ և զրանում բարձրացնում նրա ծծողական յատկու-
թիւնը. աղը յատուկ է ընդհանրապէս օրգանական մնացորդնե-
րով հարուստ հողերի տեսակների համար, մի քանի բոյսերի
վրայ մնասակար աղղեցութիւն է թողնում, և զրանց ցանկու-
ղէպքում պէտք է խուսափել աղով պարարտացնելուց. ինչպէս
օրինակ, կարտոֆել, ճակնդեղ և այլն. պարարտացումը պէտք է
տեղի ունենայ աշնանը մինչև ցանքը. պուղն արժէ 40—60
կոպէկ. մի դեսեատինի համար հարկաւոր է 18—30 պուղ:

Եւ վերջապէս մի միջոց եւ կայ, որով կարելի է հողի թէ
ֆիզիկական և թէ կերակրային բազադրութիւնը փոխել. դա
զանազան հողերի տեսակների իրար հետ խառնելն է: Այս մի-
ջոցը միայն ծայրայեղ դէպքերում կարելի է գործածել, որով-
հետև դժուար իրագործելի և նիւթական աճագին զոհաբերու-
թիւնների հետ է կապուած: Ինչպէս յիշել ենք, հողը բորակա-

ծընով հարստանալու մեծ ծառայութիւն են մատուցանում նրա մէջ գտնուող միկրոսկոպական տեսանլի փոքրիկ բակտերիաները. եթէ չը կան մի որևէ հողի մէջ այդ բակտերիաները, կարելի է հարեան հողերից պատուաստել, այսինքն՝ բակտերիաներով հարուստ հողից բաւական քանակութեամբ վերցնել և բերել խառնել դրանով սղքատ հողի հետ. բաւական է որ հողի մի կտորը պատուաստած լինի, որից կենդանիները կաբող են տարածուել ու ծածկել ամբողջ հողաբաժիններ. բայց որովհետև գիւղացիների համար եթէ ոչ անկարելի, գոնէ շատ դժուար է իմանալ, թէ այսինչ հողը բակտերիաներով հարուստ է, թէ ոչ, դրա համար էլ խորհուրդ ունի, որ երբեմն-երբեմն գիւղացին զիմի վաճառանոցին և այնտեղից պատրաստի գին այդ կենդանիները. մի փոքրիկ շիշը արժէ 1 ր. 50 կ. և ծախուում է նիտրագին (nitragin) անունով. շին մէջ գտնուող փոշին պէտք է ածել ջրի մէջ և խառնել, ապա այդ ջրով խոնաւայնել սերմացուն:

Պարարտացման նիւթերի մէջ առանձին դրոշմ են կրում իրանց վրայ կոմպոստով և կանաչ բոյսերով պարարտացնելը. այժմ մի քանի խօսք էլ դրանց մասին, որոնք պակաս անտեսական օգուտ չեն տալիս:

Կոմպոստը պատրաստուում է անտեսութեան մէջ առաջացած աւելորդ նիւթերից, և որովհետև անտեսութեան եղանակները շատ տարբեր են, ըստայնմ էլ նրա բաղադրութիւնը շատ բազմատեսակ է լինում: Կոմպոստը պատրաստելու համար կարելի է գործ ածել կենդանական աղբ, սառկած, բայց հիւսանգութեամբ չը վարակուած կենդանիների լէշեր, սրխն, սրղիքներ, ոսկոր, կճղակներ ու ամրակներ, եղջիւրներ, մազեր, մորթու կտորանք, զանազան տեսակի միջատներ, բուսական աւելորդութիւններ, ինչպէս օրինակ՝ տերևներ, արմատներ, փրջացած ձիթապուղ, խոտ, յարդ, մրգեղէններ, փողոցային աղտեղութիւններ, մոխիր, ցնչոտիներ և այլն և այլն, մի խօսքով այն բոլոր օրգանական աւելորդութիւնները, որոնք կարող են գոյանալ որևէ անտեսութեան մէջ. այդ բոլորը պէտք է համախըմբել մի տեղ և երեսը ծածկել կրախառն հողով ու այդպէս թողնել $\frac{1}{2}$ —1 տարի. այդ ժամանակամիջոցում օրգանական նիւթերը քայքայուելով ու իրար հետ խառնուելով՝ իսկական կոմպոստ են կազմում. կոմպոստի քայքայումը արագացնելու համար կարելի է նրա հետ խառնել կիր, խիճ, իսկ խոնաւ պահելու համար պէտք է ժամանակ առժամանակ վրան մէջ սրսկել: Կոմպոստն իր մէջ պարունակում է բոյսերի համար անհրաժեշտ կերակրային նիւթերի բաւական բարձր տոկոս, այն էլ լու-

ծուած դրութեամբ, որի պատճառով էլ իբրև պարարտացման նիւթ շատ մեծ արժէք ունի. նրա զնահատելի յատկութիւններէն մէկն էլ այն է, որ հողը հարստացնում է բակտերիաներով. կոմպոստը շատ շուտ է ազդում հողի արդիւնաբերութեան վրայ. նա յարմար է բոլոր տեսակ բոյսերի համար. նոյնպէս խիստ յարմար է մարդերի կանաչներին՝ իբրև մակերևոյթային պարարտացման նիւթ. մի գեսեատինի համար հարկաւոր է 4000—8000 պուլֆ 3—6 տարուայ ժամանակով:

Հողը կանաչ բոյսերով պարարտացնել ասելով պէտք է հասկանալ այն տեսակ բոյսերի աճեցումը, որոնցից ոչ թէ բերք ենք ստանում, այլ պարարտացման նիւթ և դեռ չը հասունացած, այն է՝ ծաղիկելու շրջանից քիչ առաջ այդ բոյսերը հողի տակ ենք տալիս. դրանով մենք հողի պարունակութիւնը հարըտացրած ենք լինում հումուսային մասերով և՛ բորակածին հաւաքող բոյսեր ցանկելու գէպքում՝ բորակածնով. իսկ ընդհանրապէս՝ նրանց տուած նիւթական օգուտը նա է, որ իրանք իրանց յաջորդող բոյսերին իբրև կերակուր են ծառայում խիստ մատչելի դրութեամբ. բացի դրանից՝ նրանք փոխում են հողի ֆիզիկական յատկութիւնը՝ ծանր կաւահողը փափկացնելով, թեթև ու չոր հողերի տեսակները խոնաւացնելով. եթէ մտադիր ենք մի հող կանաչ բոյսերով պարարտացնել, այն ժամանակ պէտք է ընտրել այն տեսակ բոյսեր, որոնց աճեցողութիւնը արագ է կատարոււմ, ցօղունը և տերեւները փարթամ են լինում ու արմատները երկարաձիգ. այդ նպատակի համար ձեռընտու են հետեւեալ բոյսերը. առեղտի տեսակները, ոլոտը, լոբին, մանտանխը, կաղամբը: Այդ գէպքում հողերը պէտք է աւելի խիտ սերմել, քան սովորական ժամանակներում. պայմաններից մէկն էլ այն է, որ էփան սերմացու ունեցող բոյսեր պէտք է աճեցնել. հողի տակ տալը հեշտացնելու համար պէտք է սկզբում մի գլանակաձև ծանրոցով (walze) բոյսերը հողին կպցնել և ապա դիմել խոփին:

Կանաչներով պարարտացումը ձեռնառու է միայն այն տեղերում, ուր ճանապարհների կանոնաւոր հազորդակցութիւն չը կայ և պարարտացման նիւթերի տեղափոխութիւնը խիստ դժուար ու ծախսը շատ է: